

Հայկական որոշ անձնանուններ, ենթարկուելով բարբառների հնչիւնափոխութեան կանոններին, երբեմն այնքան են հեռացած լինում բնօրինակ ձևերից, որ դրանց նախնական ձևի վերականգնումը կամ ստուգաբանութիւնը դժուարին կամ գրեթէ անհնարին է դառնում:

Նման անձնանուններից է, օրինակ՝ Հիւսիսային Նախիջեւանում եւ Վայոց ձորում ժամանակին տարածուած Դերորա աստուածաշնչեան անունը, որը հնչիւնափոխութեամբ ստացել է բարբառային Թեփուր (Թերուր, Թերուտ) ձևը, եւ որի իմաստը տեղական բարբառում (Ճահուկ-Վայքի միջբարբառ)¹ ընկալուած է «փետուր» նշանակութեամբ: Փաստօրէն, քրիստոնէական աշխարհում բաւական տարածուած, իսկ անցեալ դարից յատկապէս Միացեալ Նահանգներում եւ Անգլիայում խիստ կիրառական անձնանուններից մեկը դարձած՝ Հինկտակարանեան Դերորա² մարգարէուհի-դատաւորուհու անունը անճանաչելիօրէն փոխուել եւ ստացել է վերոյիշեալ ձևը. միջբարբառի հնչիւնափոխական կանոններով նախ ընկել է Դերորա անձնանունան բառավերջի ա-ն (ինչպէս Թամարա-Թամար, Լաուրա-Լաուր), երկու ձայնաւորների միջեւ բ-ն փ է դարձել (ինչպէս Թագուհի-Թաքօհի, Թաղեղոս-Թաթիւս), ապա փ-ի ազդեցութեամբ դ-ն դարձել է թ (ինչպէս գղակ-քրթակ, գտնել-քրթնի), այնուհետեւ՝ ռ-ից առաջ օ-ն դարձել է ու (ինչպէս Օրբել-Ուրբել, Հոռոմ-Հոռոմ): Այդպիսով,

Դերորա > Դերօր > Դերուր > Դեփուր > Թեփուր հնչիւնափոխութեան շղթայում նման անճանաչելի ձև է ստացել անձնանունը: Այստեղ, անշուշտ, դեր է խաղացել նաեւ ժողովրդական խօսքում, մասնաւորապէս՝ բարբառներում առկայ հնչիւնափոխական մի երեւոյթ՝ ժողովրդական ստուգաբանութիւնը՝ բառիմաստի վերաիմաստաւորումը արտաքին հնչական յատկանիշների հիման վրայ՝ առանց հաշուի առնելու տուեալ բառի պատմութիւնը, ցեղակից լեզուների հնչիւնական համապատասխանութիւնները եւ նոյն լեզուի տարբեր շրջանների հնչիւնական իրողութիւնները:

Համանման ձևով ժողովրդական ստուգաբանութեամբ հնչիւնափոխուած անձնանուններից են նաեւ նոյն միջբարբառում կիրառական Յեղապետը (< Եղիսաբեթ, «իւղերի բերդ»), Յեղապետ (< Իւղաբեր, «իւղի պէտ»), Սողմէր (< Սողոմէ, «ազնուամայր») եւ այլ անձնանուններ:

Անձնանունների այս շարքին, թերեւս, կարելի է դասել նաեւ հայկական աւանդական Հերիքնազ անձնանունը: Թէեւ Հրաչեայ Աճառեանը այն ստուգաբանել է որպէս «հերիք ինչքան նազ ես անում» բառակապակցութեան ամփոփուած ձև³, այնուամենայնիւ կան իրողութիւններ, որոնք հիմնաւորում են անձնանունան ծագման մեկ այլ վարկած:

Նախ ասենք, որ հայկական անձնանուններում զգալի թիւ են կազմում ուղղակի նազ արմատից եւ որեւէ ածանցից կազ-

մուած անձնանունները՝ Նազիկ, Նազէ, Նազելի, Նազեմի(կ), Նազամ(ի) եւ այլն, որոնցով հայ աղջիկներին դարեր շարունակ անուանակոչել եւ այսօր էլ անուանակոչում են նրանց մէջ հէնց նազելիութիւն, կանացիութիւն, հմայք տեսնելու ակնկալիքով, իսկ նազ արմատը դրանցում ընկալուել եւ ընկալուում է միայն դրական իմաստով:

Ինչ վերաբերում է Հերիքնազ անձնանուն ստուգաբանութեան առաւել հաւանական վարկածին, ապա դա առաջարկելու առիթ է ընձեռում հէնց մեծ հայերէնագէտի կողմից նազ արմատով մի ամբողջ շարք անձնանունների ստուգաբանութիւնների նախադէպերը: Հ. Աճառեանը, օրինակ, Մեղքնազ անձնանունը ստուգաբանում է որպէս «հրեշտականազ»՝ բխցնելով արաբերէն melek («հրեշտակ») եւ պարսկերէն nāz («նազ», «նազանք») բառերից⁴, Գուլնազը՝ «վարդի նազ(անք) ունեցող», պարսկերէն gol («վարդ») եւ nāz արմատներից⁵, Արեգնազը՝ «արեւի նազ(անք) ունեցող», հայերէն արեգ(ակ) եւ անազ բառերից⁶, Սալուիանազը՝ որպէս «նոճու նազ(անք) ունեցող», բարբառային սալուի (սալբի) («նոճի») եւ nāz բառերից⁷ եւ այլն: Պարսկերէնում նոյնպէս առկայ է նազ արմատով իգական անձնանունների մի ամբողջ շարք՝ Մահնազ Māhnāz՝ «լուսնի նազ(անք) ունեցող», māh («լուսին») եւ nāz արմատներից, Փարինազ Parināz՝ «փերու նազ(անք) ունեցող», pari («փերի») եւ nāz արմատներից, Շահնազ Šahnāz՝ «արքայական նազ(անք) ունեցող», šāh («արքա») եւ nāz արմատներից եւ այլն⁸:

Այս կազմութիւնները հիմնաւորապէս յուշում են, որ Հերիքնազ անձնանունան նախնական արմատը ամենայն հաւանականութեամբ եղել է հիբրիկ ծաղկանունը: Անձնանունը նախապէս ունեցել է Հիբրիկնազ («հիբրիկի նազ(անք) ունեցող») ձևը, այնուհետեւ ժողովրդական ստուգաբանութեամբ Հերիքնազ է դարձել եւ մեկնաբանուել վերոյիշեալ «հերիք ինչքան նազ ես անում» իմաստով: Սա տեղի է ունեցել հիբրիկ ծաղկանունան նախնական իմաստը դարերի ընթացքում մթազնուելու եւ ժողովրդական լեզուում զամբեղ (Վան), բարբուսնակ (Մուշ), լալաքար (Արցախ), սէլալա (Վայոց ձոր), հազարաշաբիք (Նախիջեւան) եւ այլ տարբերակներով փոխարինուելու պատճառով:

Այս վարկածն է հաստատում նաեւ այն հանգամանքը, որ հիբրիկ ծաղկանունը վկայուած է հին հայերէնում⁹, միջնադարեան ձեռագրերում առկայ է նաեւ Հիբիգ (Հիբիկ) անձնանունը¹⁰, որը աւանդաբար ներառուել եւ այսօր էլ ներառուած է հայկական անունների ցանկերում:

Հ. Աճառեանը, ի դէպ, հնարաւոր է համարում նաեւ այս ծաղկանուն եւ հիբ («հակնթագոյն») գունանուն կապը, մանաւանդ որ սանսկրիտում առկայ է hari («դեղնականաչ»), լատիներէնում՝ purpura եւ յունարէնում՝ πορφύρα («յասամանագոյն») գունանունները, որոնք համեմատելի են միմեանց հետ, ինչպէս նաեւ յունարէնի ἵρις («հիբիկ») եւ հին պարսկերէնի xīr («մեխակ») ծաղկանունների հետ: Հնարաւոր ենք համարում, որ հնդկական Հիբ իգական անձնանունը («Հիբ եւ Ռանջա» փենջաբեան յայտնի սիրավէպի հերոսուհու

1 Ա. Վարդանեան, Վայոց ձորի միջբարբառը, Եր., 2004:
2 Աստուածաշունչ մատենագիտութեան հրատարակչութեան հրատարակած, Դ.4-14, Կոստանդնուպոլիս, 1896, էջ 295-296:

3 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. 3, Եր., 1946, էջ 86:

4 Նոյն տեղում, էջ 239:
5 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. 1, Եր., 1942, էջ 505:
6 Նոյն տեղում, էջ 271-272:
7 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. 4, Եր., 1948, էջ 347:

8 Персидско-русский словарь (руководитель подготавителей – Ю. Рубинчик), հտ. 2, Մ., 1970, էջ 783-787:
9 Նոր բառգիրք հայագետի լեզուի, հտ. 2, Ե. 1981, էջ 100:
10 ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ (կազմեց Լ. Խաչիկեանը), հտ. 9, Եր., 1967, էջ 159:

անունը) նոյնպէս կապ ունենայ այս ծաղկանուան հետ:

Անձնանունան ստուգաբանութեան այս վարկածի օգտին են զարմանալիօրէն խօսում նաեւ Բ > Խ հնչիւնափոխութիւն ունեցող՝ Վանի¹¹, Խոյի¹², Զուղայի¹³, Մարաղայի¹⁴ բարբառներում հերիք («բաւական») բառի խերիք, խերիք, խերիչ ձեւերի կողքին այս անձնանունան բացառապէս Հերիքնազ, Հերիքնազ ձեւերի, իսկ Զուղայի բարբառում՝ առաւել խօսուեն Յիրիկնազ ձեւի առկայութիւնը:

Ի դէպ, Զուղայի բարբառը հայերէնի միակ բարբառն է, որը պահպանել է հին հայերէնի հիրիկ-ը՝ յիրիկ ձեւով, այն հերիկ ձեւով առկայ է նաեւ զազայերէնում¹⁵, որը հաւանաբար փոխառութիւն է հայերէնի Դերսիմի բարբառից:

Այսպիսով, հայկական աւանդական Հերիքնազ անձնանունը, որը Հ. Աճառեանը ստուգաբանել է որպէս «հերիք ինչքան նազ ես անում» բառակապակցութեան ամփոփում ձեւ, ամենայն հաւանականութեամբ նախապէս ունեցել է Հիրիկնազ ձեւը՝ «հիրիկի նազ(անք) ունեցող» իմաստով: Ժամանակի ընթացքում հայերէնի ժողովրդական տարբերակներում մթագնելով հիրիկ ծաղկանունան իմաստը՝ անձնանունը առաւել ուշ շրջանում ժողովրդական ստուգաբանութեամբ ստացել է Հերիքնազ ձեւը, թէեւ իր հիմքում որեւէ աղբրս չունի հերիք («բաւական») բառի հետ:

11 Յ. Թորշեան, *Բառարան Վանի բարբառի* (աշխատասիրութեամբ Հ. Մեսրոպեանի), Եր., 2018, էջ 85:
12 Մ. Ասատրեան, *Ուրմիայի (Խոյի) բարբառը*, Եր., 1962, էջ 218:

13 Հ. Աճառեան, *Քննութիւն Նոր-Ջուղայի բարբառի*, Եր., 1940, էջ 373:
14 Հ. Աճառեան, *Քննութիւն Մարաղայի բարբառի*, Եր., 1926, էջ 408:
15 Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հտ. 3, Եր., 1977, էջ 96-97:

ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ (ԸՍՏ ԵՈՐ ԶՈՒՂԱՅԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻԶ ՎԱՆՔԻ ԶԵՌԱԳՐԱՏԱՆ Թ. 160 ԶԵՌԱԳԻՐ ՄԱՏԵԱՆԻ)

Յասմիկ Կիրակոսեան

Ներածութիւն: Ուսուցողական գրականութեան մաս կազմող ուսումնական-ուղեցոյց ձեւերակները ստեղծման պատմութիւնը եւ ընթացքը կապուած է գիտութեան եւ դպրութեան, գիտելիքի պատմական շարժի ուսումնասիրութեան հետ: Հայ հին մատենագրութեան ոլորտներից մեկը գիտելիքը փոխանցելու գործիքները՝ ուսումնական-ուղեցոյց ձեւերակները կամ «վարդապետական գրքերն»¹ էին, որոնք առանձին պատմագրական, աստուածաբանական, հռետորական, բժշկագիտական, տոմարական-թուրքանական, քերականագիտական, աստղագիտական, փիլիսոփայական, տրամաբանական, ճարտասանական, բնագիտական եւ այլ երկերից բացի, կազմուել են ժողովածուների տեսքով: Այս յօդուածի նպատակն է ժէ. դարում գրուած եւ կազմուած հայերէն մի ձեւագիր մատենանի ուսումնասիրութեան միջոցով ներկայացնել վաղ արդի շրջանում հայ դպրութեան մէջ շրջանառուող ուսումնական ձեւերակների ձեւաչափերից մեկը՝ ժողովածու-ձեւարկը: Ինչպէս նշում է Մանուկ Աբեղեանը,

հայ դպրութեան վերածնունդը, վանական ու ծխական դպրոցների բացումը, ընդհանրական ուսուցումը եւ այդ բնագաւառում եկեղեցականների ջանքերը վերսկսուեցին եւ նոր շունչ ստացան ժՁ-ԺԷ. դարերից եւ այդ շարժման կենտրոններից էր Նոր Զուղան², որտեղ ժէ. դարի 20-ական թուականներին Սիւնեաց Մեծ անապատի սան Խաչատուր Կեսարացիին անցաւ վարժապետութեան Մովսէս վարդապետի ջանքերով հիմնուած դպրոցում³: Այս տեսութիւնը առարկայանում է նաեւ քննարկուող ձեւագիր ուսումնական ուղեցոյցի միջոցով, որը Նոր Զուղայի դպրատներում գործածուող ժողովածու ձեւերակ էր⁴:

1 Այս եզրի մասին տես Լ. Գ. Խաչերեան, *Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները. դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները, համալսարանները միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայում* (V-XVI դ.), Լիզպոն, 1998, էջ 188-189:
2 Մ. Աբեղեան, *Երկեր*, հտ. Դ., Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1970, էջ 546-547:
3 Տե՛ս Պատմութիւն Նոր Զուղայու որ Յասապահան, աշխատասիրեալ ի Պ. Յարութիւն Թ. Տէր Յովհաննէանց, հտ. Բ, Նոր Զուղա, ի տպարանի Ամենափրկչեան Ս. Վանաց, 1881, էջ 252-253:

4 Ուսումնական նպատակով ժողովածոյ-ձեւարկ կազմելու մասին տեղեկութիւն է տուել նաև Յարութիւն Տէր-Յովհաննէանը՝ մասնագնշելով Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհածողովը». «Թիմեայ է նա յամի 1687 զմատեան մի, յորում կան խառն առարկայք, խրատ վասն վաճառականութեան, սկզբունք թուրքանութեան, գործածութիւն Ազարիայի թուականին և այլ խառն պարագայք, որոց աղագաւ կոչեցաւ այն մատեան՝ «աշխարհածողով», տե՛ս Պատմութիւն Նոր Զուղայու որ Յասապահան, հ. II, էջ 253: